# ԳԻՐՔԱԿՈՍՈՒԹԻՒՆ. ԱՂՏԵՂԱԳԻՏՈՒԹԻՒՆ

## ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉԵԱՆԻ ՄԱՄՆԱՒՈՐ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ՀԱՒԱՔԱԾՈՒՆ

Երեւանամերձ Փարաքար գիւղում՝ Մկրտչեանների (նախկինում՝ Սանոսեաններ) տնամերձ մատուռում են պահւում ԺԶ. դարի երեք Աւետարան: Այս աւետարանները շուրջ մէկ հարիւրամեակ իրենց հաստատուն տեղն են գտել Մկրտչեանների ընտանիքում, եւ փոխանցուելով մի քանի սերունդ, որոնց մասին նաեւ տեղեկութիւններ կան ձեռագրերի էջերում, այժմ գտնւում են Նարեկ Մկրտչեանի խնամքի եւ հոգածութեան ներքոյ:

Ս.Ամենափրկիչ մատուռ, Փարաքար

Աւետարաններից բացի, Մկրտչեանների մասնաւոր հաւաքածոյում հանգրուանել են նաեւ մէկ ձեռագիր ժապաւինաձեւ հմայիլ՝ գրված 1714 թուականին Կ. Պոլսում, եւ մէկ հնատիպ ժապաւինաձեւ հմայիլ՝ 1659 թուականին լոյս տեսած Ոհանեսի որդի Գուլբասարի տպարանից[1]: Ձեռագիր հմայիլն Արշակ Մկրտչեանին նուիրել են 2010 թուակա-

1 Հնատիպ հմայիլը հայերէն տպագիր հմայիլների առաջնեկն է (մինչ այս մեզ յայտնի հնագոյն օրինակը 1698 թուականի մի տպագրութիւն էր, որի երկու ո՛չ ամբողջական օրինակ գտնում են Մաշտոցեան Մատենադարանի հնատիպ գրքերի հավաքածոյում (Ժապաւինաձեւ հմայիլ Հմր 83 եւ 118), մէկական ո՛չ ամբողջական օրինակ՝ Ե. Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանում (Թ. Ազատեանի ֆ., արխ. 232/IV բաժին) եւ Հայաստանի Ազգային գրադարանում (հնատիպ հավաքածուի ժապաւինաձեւ հմայիլ Հմր 9), իսկ շրջանառութեան մէջ եղած հնագոյն հնատիպ ժապավենաձեւ հմայիլը 1709 թուականին Կ. Պոլսում Էրկեար Գեղեւանցու տպարանի օրինակն է. տե՛ս **Ն. Ոսկանեան, Ք. Կորկոտեան, Ա. Սաւալեան,** Հայ գիրքը 1512-1800 թուականներին, Երեւան, 1988, Հմր 241, էջ 176-7) եւ ունի տպագրական առանձնայատկութիւններ, ինչի պատճառով դրան կանդրադառնանք առանձին հրապարակումով:

նին: Այն բերուել է Անիից, իսկ այժմ իր մնայուն տեղն է գտել Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրական հաւաքածուի հայերէն ժապաւինաձեւ հմայիլների հաւաքածուի 506 համարի ներքոյ՝ որպէս Նարեկ Մկրտչեանի նուիրատուութիւն: Տպագիր հմայիլը ժամանակին Մկրտչեանների սանիկները յանձնել են մատուռին: Մինչ այդ այն պահուել է Էջմիածնում: Իսկ, ինչպէս հաղորդել են նոյն սանիկները, այն բերուել է Կիլիկիայից եւ իրենց է հասել՝ փոխանցուելով սերդէ սերունդ: Նարեկ Մկրտչեանը սոյն թուականի յունիս ամսին վերը նշուած ձեռագրական հինգ միաւորները բերեց Մատենադարան՝ նրանց մասին հիմնաւոր տեղեկութիւններ ստանալու եւ հետագայ խնամքն աւելի լաւ կազմակերպելու նպատակով: Արդիւնքում աւետարանները եւ հմայիլներն ախտահանուեցին, հնապիպ հմայիլն ամբողջութեամբ նորոգուեց, իսկ ձեռագիր հմայիլը նվիրաբերուեց Մատենադարանին: Նարեկը ոչ միայն համաձայնեց որոշ ժամանակ դրանք թողնել հիմնաւոր ուսումնասիրութեան եւ հրապարակման համար, այլեւ մեծ սիրով մեզ հաղորդեց այս հաւաքածուի ստեղծման եւ աւետարաններով պայմանաւորված՝ իրենց ընտանիքի պատմութեան մանրամասները, որոնք եւ ներկայացնում ենք ստորեւ:

Սանոսեանները բնակուել են Արթիկի շրջանի Ղուլիջան գիւղում (այժմ՝ Սպանդարեան): 1920-ականներին Ղումաշ տատը (Սանոսեան) երազում տեսել է, որ իրենց համգիւղացի Անդրանիկ Սանոսեանի տան գոմի սալայատակի տակ պահուած են երեք Աւետարան: Երազի մասին յայտնել է Անդրանիկին, սակայն վերջինս մերժել է՝ հրաժարուելով քանդել իր գոմի սալայատակը: Երազը կրկնուել է մի քանի անգամ, ինչի մասին Ղումաշ տատը տեղեկացրել է իր համագիւղացուն, սակայն Անդրանիկ Սանոսեանը մնացել է աներեր: Վերջինիս մերժողական վճռի փոփոխութեանը նպաստել է մի դժբախտ պատահար. Անդրանիկի փոքր տղան ընկել է ձիուց եւ վնասուածք ստացել. այս պատահարը կապելով Ղումաշ տատի երազների հետ՝ Անդրանիկը կանչել է նրան եւ գոմի տարածքում աւետարանները փնտրելու համաձայնութիւն տուել: Արդիւնքում գտել են երեք

Մկրտչեանների մասնաւոր հաւաքածոյի երեք Աւետարանները Ս. Ամենափրկիչ մատուռում

Աւետարան, որոնք այդուհետեւ դարձել են Սանոսեանների ընտանեկան սրբութիւնները:

Ղումաշ Սանոսեանը 1934 թուականին այս աւետարանները յանձնել է 1910 թուականին ծնուած որդուն՝ Մկրտիչ Սանոսեանին: Սանոսեանների տնամերձ հին եկեղեցու աւերակներին այս աւետարանները նոր շունչ են հաղորդել. այն դարձել էր շրջակայ գիւղերի բնակիչների սրբատեղի-ուխտավայրը: Ղուլիջան գիւղի հին եկեղեցու աւերակների տեղում այժմ Սուրբ Ամենափրկիչ նորակառոյց եկեղեցին է, որը 2001 թուականին կառուցել են Մկրտիչ Սանոսեանի որդու՝ Արտաշէս Մկրտչեանի զաւակները՝ Արշակ եւ Տիգրան Մկրտչեանները՝ ի նշանաւորումն քրիստոնէութեան ընդունման 1700-ամեակի:

Աւետարանները մինչ 1957 թ. մնացել են Ղուլիջան գիւղում, իսկ դրանից յետոյ նոր հանգրուան են գտել Փարաքար գիւղում, ինչը եւս ունի իր պատմութիւնը: ՊԱԿ-ը, տեղեկանալով աւետարանների մասին, որոշել էր ձեռագրերն առգրաւել: Գիւղի թաղային լիազօրը տեղեկացում է այդ մասին, բայց վերջինս Մկրտիչ Սանոսեանին յայտնում է իշխանութիւնների մտադրութիւնների մասին: Մկրտիչ եւ Արեւհատ Սանոսեանները, վերցնելով աւետարանները, նոյն պահին հեռանում են բնօրրանից եւ հաստատւում Փարաքար գիւղում՝ դառնալով Մկրտչեան: Այստեղ էլ աւետարանների համար կառուցում է մատուռ՝ Սուրբ Ամենափրկիչ, որը վերակառուցել է Արշակ Մկրտչեանի կողմից եւ օծուել է 2004 թուականին:

Մկրտչեանների մասնաւոր հաւաքածուի ԺԶ. դարի երեք աւետարանները եւ 1714 թուականի Հմայիլն իրենց գրչութեան ժամանակի յիշատակարաններով եւ հետագայի յիշատակագրություններով մեզ են հաղորդում ո՛չ միայն տեղեկութիւններ ձեռագրերի ստեղծման ժամանակի, տեղի, անհատների մասին, ովքեր մասնակցել են դրանց արարման գործին կամ եղել պատուիրատուներ, այլեւ ուշագրաւ տեղեկութիւններ են ընձեռում պատմական, ճարտարապետական, ազգագրական, տոհմաբանական, փիեզերագիտական եւ մի շարք այլ բնագաւառների մասին: Այս ձեռագրերի գեղարուեստական արժէքն ընթերցողին հասանելի դարձնելու նպատակով նկարագրութիւններին զուգահեռ ներկայացնում ենք իւրաքնաչիւր ձեռագրից մի քանի էջ, որոնք հնարաւորին չափ պատկերաւոր կներկայացնեն թե՛ մանրանկարչութիւնը, թե՛ գրչարվեստը:

Ստորեւ ներկայացնում ենք Մկրտչեանների մասնաւոր հաւաքածոյի աւետարանների եւ ձեռագիր Հմայիլի նկարագրութիւնները:

1

## Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

ՋՈՒՂԱ ՌԻԲ. - 1573

ԳՐԻՉ՝ Անանիա եւ իր աշակերտ Հայրապետ փոքր երէց: ՍՏԱՑՈՂ՝ Գուլզար:

ԹԵՐԹ՝ 190. չգրուած՝ 59բ, 95աբ, 189բ: ՊՐԱԿ՝ Ա-ԺԷx12 (ԺԲ, ԺԳ 8, ԺԷ 9, Ա 10, ԺԴ 11): ՆԻՒԹ՝ թուղթ՝ լուսագծերով: ՄԵԾԻԹԻՒՆ՝ 21-21,5x13,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (26x18,6-19): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 94բ): ՏՈՂ՝ 26:

ԿԱԶՄ՝ (Ի. դար) սեւ մոմլաթ, միջուկը՝ ստուարաթուղթ, աստառը՝ թուղթ. չգրուած: Ա փեղկի կենտրոնում՝ հաւասարաթեւ մետաղէ խաչ՝ չորս արծաթէ կոստղերով՝ մէկական խաչի իւրաքանչիւր թեւին: Լուսանցակողերը՝ կարմիր (մասամբ դունաթափուած): ՊԱՀՊԱՆԱԿ՝ 2 (Ա, Բ) + 1 (Գ): Ա, Գ՝ սպիտակ թուղթ՝ մաս կազմաստառի, Ա՝ չգրուած: Բ՝ այլ թուղթ՝ չգրուած:



ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ *՝ Կ ի ս ա խ ո ր ա ն՝ 1ա, 60ա, 96ա, 147ա:

Լ ո ւ ս ա ն ց ա զ ա ր դ՝ բուսական (2ա, 3ա, 4ա, 5բ, 6ա, 7բ, 12բ, 13աբ, 16ա, 17ա, 18ա, 19ա, 20բ, 21բ, 22աբ, 36բ, 147բ, 148ա, 149բ, 151ա), թռչուն (3բ, 14բ, 152ա), վարդեակ (47բ, 50ա, 153ա), ծառ (4բ, 8բ), յուշկապարիկ (9բ): Զարդագիր՝ բուսական (2ա, 3աբ, 4ա, 6ա, 9բ, 12բ, 13աբ, 14բ, 16ա, 17ա, 18ա, 19աբ, 20բ, 21բ, 22աբ, 23աբ, 24ա, 25բ, 26աբ, 27ա, 31ա, 32բ, 33բ, 35բ, 36ա, 36բ, 38ա, 39բ, 44բ, 45բ, 47բ, 50ա, 51ա, 52ա, 54ա, 55ա, 57բ, 58ա, 61ա, 62ա, 63բ, 64աբ, 65բ, 66բ, 68բ, 69աբ, 70ա, 71աբ, 73բ, 74ա, 75ա, 76բ, 77բ, 78բ, 79աբ, 80ա, 81աբ, 82բ, 83բ, 85բ, 87բ, 88աբ, 91ա, 92ա, 93ա, 94ա, 99բ, 100բ, 101ա, 102ա, 104բ, 105աբ, 106բ, 107բ, 108աբ, 110բ, 111ա, 112ա, 113ա, 114ա, 115ա, 116ա, 118ա, 119աբ, 120ա, 121բ, 122բ, 123աբ, 126ա, 127բ, 128բ, 129ա, 132բ, 134բ, 135ա, 136աբ, 139ա, 140բ, 141բ, 142աբ, 144բ, 147բ, 148աբ, 151ա, 154աբ, 156բ, 157ա, 159բ, 161ա, 162աբ, 163ա, 164բ, 166ա, 167աբ, 168ա, 170աբ, 171բ, 172ա, 173աբ, 174ա, 175ա, 176աբ, 182բ, 184բ, 185բ, 187աբ, 188ա), թռչնագիր (4բ, 5բ, 7բ, 8բ, 25ա, 28ա, 29ա, 30բ, 34բ, 44ա, 61ա,

63ա, 66ա, 67ա, 70ա, 72բ, 74բ, 127ա, 130բ, 141բ, 149աբ, 150ա, 151ա, 152ա, 153ա, 155ա, 156ա, 157ա, 159ա, 160բ, 178բ), Հանգուցագիր (84բ, 164ա):

Գ ո յ ն ե ր՝ կարմիր, կապոյտ, դեղին, նարնջի, սեւ:

ԾՆԹ. Բացի կիսախորաններից, մնացեալը գծանկարային է: Լուսանցազարդերի եւ զարդագրերի մի մասն արուած է հետագայում՝ անարուեստ, գծանկարային ոճով, սեւ թանաքով:

ՎԻՃԱԿ՝ Բաւարար. վերակազմուած Ի. դարում, թ. 46, 146 սխալ կարուած հակառակ դիրքով՝ կարդալ սրանց նախ բ.երեսները, յետոյ՝ ա. էջերը. թ. 47-53՝ սխալ դրուած, պէտք է լինեն թ. 146-7ի միջեւ. թ 115՝ նոյնպէս, պէտք է լինի թ. 126-7ի միջեւ: Խոնաւութիւն տեսած եւ թուղթը գունափոխուած, թերթերը եզրամաշ: Ունի ԺԸ. դարի նորոգում, որի համար օգտագործուել են հատուածներ 1714 թ. տպագիր Մաշտոցի թերթերի (Կ. Պոլիս, տպ. Աստուածատուր Կոստանդնուպոլսեցու. տե՛ս *Ն. Ոսկանեան, Ք. Կորկոտեան, Ա. Սաւալեան,* Հայ դիրքը 1512-1800 թուականներին, Հ՝ 280, էջ 206-7):

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. 1ա-45բ, 46բա, 54ա-59բ Աւետարան Մատթէոսի, 59ա Նախադրութիւն.
2. 60ա-94բ Աւետարան Մարկոսի, 94բ Նախադրութիւն.
3. 96ա-114բ, 116ա-26բ, 115աբ, 127ա-145բ, 146բա, 47ա-53ա Աւետարան Ղուկասու, 53ա Նախադրութիւն.
4. 147ա-189ա Աւետարան Յովհաննու:

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

1. Անանիա գրչի

53ա Զմեղապարտ գրիչս՝ սուտ Անանիայ, զհայ[ր]ն իմ՝ Տիրում, եւ զմայրն իմ՝ Սալթամէլիքն, եւ զքուրն իմ՝ Խաթունջանն, որ հանգուցեալ են առ Քրիստոս, յիշեցէ՛ք ի Քրիստոս, եւ Աստուած զձեզ յիշէ ի միւս ան[դամ] դալըստեանն. ամեն:

59ա Զմեղապար[տ] Անանիայ գրիչս յիշեցէ՛ք:

94բ Զմեղապարտ գրիչս եւ զաշակերտն իմ՝ Հայրապետ քահանայն, եւ զիս՝ Անանիայ սուտանուն, եւ զհայրն իմ՝ Տիրում, եւ զմայրն իմ՝ Սալթամէլիք, աղաչեմք զձեզ, ո՛վ սուրբ եղբայրք, յորժամ ընթեռնուք սուրբ Աւետարանս՝ ի Քրիստոս յիշեսջիք, եւ Աստուած զձեզ յիշէ իւր արքայութիւն. ամեն:

189ա Փառք ամենասուրբ Երրորդութեանն եւ միածնութեանն՝ Հաւր եւ

Որդոյ եւ Սուրբ Հոգոյն, յաւիտեանս յաւիտենից. ամէն: Արդ, գրեցաւ զսուրբ Աւետարանս ձեռամբ մեղաւոր եւ փծուն գրչի՝ սուտանուն Անանիայ կրաւնաւորի, ի գէաւղաքաղաքս Ջուղայ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին, ի թվականին Հայոց ՌԻԲ. (1573):

2. Հայրապետ գրչի

53բ Հայրապետ սուտանուն փոքր էրէց եւ զվարդապետն իմ Անանիա աբեղէն յիշեցէ՛ք ի Քրիստոս, եւ Աստուած զձեզ յիշէ յիւր արքաութեան. ամէն:

Ստացողի

190ա (1573 թ.) Ես՝ Գուլզար, ըստացայ զսուրբ Աւետարանս ի հալալ ընչից իմոց՝ յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց՝ հաւրն իմոյ՝ Թադեորին, եւ մաւրն իմ՝ Սիրիխաթունին, եւ եղբայրն իմ՝ Սուլթանշայ, Մարշայ, եւ քվերացն՝ Յեթարին, Ղզըմին, Ղզլարին, եւ կողակից՝ Թարբակի, եւ որդին իւր՝ Գուլեւազ, եւ մի<ի>ւս կողակիցն՝ Սանամ, եւ զփեսան իւր՝ Իրանշայ, եւ կողակիցն՝ Յեթար, եւ դուստրն՝ Սաւզի, եւ զայրն իւր՝ Փիրղուլի, եւ զՍիրիխաթունն, եւ այրն՝ Յետքարշայ, եւ պատրունն իմ՝ Ջանբակի, եւ կողակիցն՝ Դարիոյմալաք, եւ որդին՝ Արզանի եւ Յարբակի: Ո՛վ սուրբ քահանայք, ով ոք կարդաք եւ ընթեռնուք զսուրբ Աւետարանս, ողորմի ասացէ՛ք Գուլզարին եւ թողութիւն մեղացն, եւ Աստուած ձեր մեղացդ թողութիւն առնէ. ամէն: Դարձեալ յիշեցէ՛ք զՋվան եւ կողակիցն՝ Խունթքարն: |190բ| Ի թվականին ՌԻԲ. (1573), ի հայրապետութեան տէր Ովանէս արհէ էպիսկոպոսին եւ թադաւորութեան Շահ Թահմազին, ի կաթողիկոսութեան Տէր Միքայել[ի]:

Դարձեալ յիշեցէ՛ք [զ]Դաստակայ[2] քահանայքն՝ զտէր Բարս[եղն], զտէր Խաչատուրն, զտէր Առաքելն, զտէր Աթանս[ն], զտէր Եղազարն, զտէր Գրիգորն, զտէր Դանիելն, զտէր Յակոբն, զտէր Ադամն, զտէր Մելքէսեթն, զտէր Եսային, յիշեցէ՛ք ի Քրիստոս:

ՀԵՏԱԳԱՅԻ

53բ (ԺԸ. դ., նոտրգիր) Գոհութիւն ստեղծողիս, որ երթամ ես իրեն դիմաց, մեծ ես, դու անհուն ես Տէր, գթաց ես դուն ողորմած, խնդրեմ ի քէնէ, Տէ՛ր բարերար, դու ես իմ ճար, Աստուա՛ծ, լալոտ աչօք աղերսեմ քեզ՝ դու ողորմութեանն դուռը բաց. ծօ տէր Մաղաքի որդի Մեմդանալքս մեղկը լաց:

Գա (Ի. դար, շղագիր) ՀԻՇԱՏԱԿ. Հիշատակս Ավետարանի իմ որդիներին՝ Ղումաշ Սանոսյանի, կեսրարը Մկո Սանոսյանի: Հիշատակ սկեսուրը Սինամ Սանոսյանի, որդին Սարքիս Սանոսյանի, ինքս՝ Ղումաշ Սանոսյանի:

Հիշատակ իմ որդիներին Արտաշ Սանոսյանի, Գիւլիզար Սանոսյանի, Լուսիկ Սանոսյանի, Մկրտիչ Սանոսյանի, Աշխեն Սանոսյանի՝ հարսը, Արեւհատ Սանոսյանի՝ հարսը, որդի Արշակ Սանոսյանի, հարսը՝ Սրբուն Սանոսյանի, թոռը՝ Անուշավան Սանոսյանի, Ռաֆիկ Սանոսյանի, թոռը՝ Ղումաշի ի փառս:

---

2 «Դաստակ՝ գիւղ Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Գողթն գաւառում: Այժմ՝ Դաստա, Նախիջեւանի ԻՍՍՀ Օրդուբադի շրջանում» (Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երեւան, 1988, էջ 38):

Հիշատակութիւն Ռազմիկ Սանոսյանի, Լիդա Սանոսյանի՝ հարսը, Վարիչկա Սանոսյանի՝ աղջիկը, թոռը՝ Ղումաշի ի փառս:

Հիշատակութեան Ռաֆիկ Սանոսյանի, Ժենիկ Սանոսյանի՝ կինը, Սարգիս Սանոսյանի՝ տղան, Անուշավան Սանոսյանի՝ տղան, Ռազմիկ Սանոսյանի՝ տղան, Վեներա Սանոսյանի՝ աղջիկը, Արտուշ Սանոսյանի՝ թոռը Ղումաշի, Վիկտորիա Սանոսյանի՝ կողակից Արտուշի, Արշակ Սանոսյան՝ տղան Արտուշի, Տիգրան Սանոսյանի՝ տղան Արտուշի, Էլմիր Սանոսյանի՝ աղջիկը Արտուշի:

Ի փառս հիշատակության Ղումաշ Սանոսյանից իր աղջիկ թոռներին՝ Օսանա Սանոսյանի, Քնարիկ Սանոսյանի, Ռիմա Սանոսյանի, Գրետա Սանոսյանի, Էմմա Սանոսյանի, Թամարա Սանոսյանի, Բավական Սանոսյանի, Գոհարիկ Սանոսյանի:

Տիրոջ պահպանությունը Գոհարիկ Սանոսյանի՝ պահպանիչ գրքերի, պահապան օգնական Հիսուս Քրիստոսի Գոհարիս:

Հիշատակությունը հիշեցրեց Մկրտիչ Սանոսյանը: Հավերժ պահպանություն իմ որդիներին. Մկրտիչ:

Գբ (Ի. դար, շղագիր) Հիշատակ իմ ազգի Ղումաշ Սանոսյանից, հիշեցումն էր տէր Մեսրոպի Սանոսյան, Սահակ Սանոսյանի քարոզիչ Աստծո, տէր Դանիելի Սանոսյան:

Գրեց Բիսմարկ Սանոսյանը, կինը՝ Լեյլա Սանոսյան, աղջիկը՝ Արաքսյա Սանոսյան:

Հավերժ կենդանություն երիտասարդութեան: Ավանդ. Զմոռանաք լեզուն եւ հավատքը. Մկրտիչ:

ՆՇՈՒՄ՝ 189ա՝ «1022» (կապոյտ թանաքով): Գա «ՌԻԲ. + (551), գրված 1573 թ.» (կապոյտ թանաքով):



Յուշկապարիկ եւ բուսական զարդագիր

Կիսախորան-անուանաթերթ Աւետարան 1, էջ 96ա

## Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Մամ գիւղ (Բաբերդ գաւառ) ՌԼԵ. - 1586

ԳՐԻՉ՝ Աստուածատուր երէց Տանձուտցի: ՍՏԱՑՈՂ՝ Մամ գիւղի ժողովուրդ:

ԹԵՐԹ՝ 235 (չգրուած՝ 1ա, 8բ, 9ա, 10բ-12ա, 74ա, 235ա): ՊՐԱԿ՝ 10+Ա-ԺԷ*x12 (Ա 11, Զ 10)*: ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾԻԹԻՒՆ՝ *22x*16,5-17: ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (15.5*x*11,5): ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 184ա): ՏՈՂ՝ 21:

ԿԱԶՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ դռնակով, միջուկը՝ տախտակ, աստառը՝ դրոշմազարդ կտաւ: Ա. փեղկին ունի մետաղէ չորս փլաք, մէկ հաւասարաթեւ ականակուռ (խաչի կենտրոնում կարմիր ապակէ) խաչ ստորին ձախ անկիւնում, եւ մէկ մեծ, դրեթէ ամբողջ փեղկը բռնող լատունէ խաչ՝ ամրացուած չորս կոստղերով (Ի. դար): Ա. փեղկի աստառին արտաքին լուսանցին մօտ ամրացուած է մի պղնձէ խաչ՝ Խաչելութեան պատկերով (Ի. դար): Լուսանցակողերը՝ մէջընդմէջ կարմիր եւ կապոյտ (մասամբ դունաթափ):

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ՝ Աւետումն՝ 1բ, Ծնունդ, Հովիւների եւ մոգերի երկրպագութիւն՝ 2ա, Ընծայումն տաճարին՝ 2բ, Մկրտութիւն՝ 3ա, Պայծառակերպութիւն՝ 3բ, Յարութիւն Ղազարու՝ 4ա, Մուտք Երուսաղէմ՝ 4բ, Ոտնլուայ՝ 5ա, Խաչելութիւն՝ 5բ, Պատանումն Քրիստոսի՝ 6ա, Աւերումն դժոխոց՝ 6բ, Յարութիւն՝ 7ա, Համբարձումն՝ 7բ, Հոգեգալուստ՝ 8ա, Քրիստոս չորեքկերպեան աթոռին եւ առաքեալք՝ 9բ, Կշռումն մեղաց՝ 10ա, Մատթէոս՝ 12բ, Մարկոս՝ 74բ, Ղուկաս՝ 114բ, Յովհաննէս եւ Պրոխորոն՝ 181բ: Լուսանցային մանրանկար՝ Կոյրք երկու՝ 29բ, Մարիամ Մագդաղենացի՝ 72ա, Յովհաննէս Մկրտչի գլուխն ի վերայ սկուտեղի՝ 85ա, Գաբրիել հրեշտակապետ՝ 116բ, Մարիամ Աստուածածին՝ 117ա, Հովիւ՝ 119ա, Հուր եկի արկանել՝ 151ա, Լուսապսակով այր ոմն (առաքեա՞լ) ի վերայ ծառի՝ 163ա, Սուրբ Հոգի՝ 189ա, 218բ, Քրիստոս խաչ ընդ ուս՝ 226ա, «Դուռն փակեալ»՝ 229ա: Կ ի ս ա խ ո ր ա ն՝ 13ա (կիսախորանի մէջ՝ շրջանակում, Քրիստոս՝ աւրհնող աջով), 75ա, 114ա, 182ա:

Լ ու ս ա ն ց ա զ ա ր դ՝ բուսական (14աբ, 16բ, 19ա, 20ա, 22ա, 23բ, 27ա, 28բ, 29ա, 30ա, 31ա, 32բ, 34աբ, 35բ, 36բ, 37բ, 38բ, 39բ, 40բ, 41աբ, 43բ, 44ա, 45ա, 46բ, 47ա, 48ա, 49բ, 50բ, 52ա, 57ա, 58ա, 66ա, 77աբ, 78ա, 79ա,

80աբ, 81ա, 83աբ, 84աբ, 85ա, 86ա, 87ա, 89աբ, 90ա, 91ա, 92բ, 93բ, 94բ, 96ա, 99բ, 101ա, 102ա, 105աբ, 106բ, 111ա, 120ա, 121ա, 124բ, 125բ, 126ա, 127ա, 129աբ, 132աբ, 134ա, 135ա, 136բ, 138բ, 140ա, 141ա, 142աբ, 144ա, 145ա, 146աբ, 149ա, 150ա, 152ա, 154ա, 155ա, 157բ, 160բ, 166բ, 168ա, 171ա, 172ա, 180ա, 183բ, 184ա, 185բ, 186աբ, 187ա, 188ա, 191բ, 193բ, 194աբ, 197աբ, 199բ, 200բ, 201աբ, 203ա, 205աբ, 207ա, 209բ, 210աբ, 213ա, 214աբ, 216աբ, 222ա, 227բ, 229բ), թռչուն (42բ, 55բ, 68բ, 76ա, 87բ, 88բ, 112ա, 153ա, 156ա, 167ա, 183բ, 185ա, 190ա, 198ա, 211բ, 212բ, 231բ), յուշկապարիկ (18ա, 24բ, 40բ, 56ա, 79բ, 81բ, 95ա, 127բ, 128ա, 159բ, 162բ, 177բ, 191ա, 205բ), տաճար (60ա, 102բ, 169ա), խաչ (65ա, 66բ, 69բ, 71բ, 109ա, 173ա, 174բ, 211բ, 223բ), ծառ (53ա, 54ա, 97բ, 98բ, 165ա), թռչուն՝ կտուցին օձ (76բ), վարդեակ (96բ, 119ա, 121բ, 178բ, 192բ, 195բ, 231ա), սկիհ եւ դաւաթ (213ա), ճուկ (230ա): Զարդագիր՝ բուսական (23բ, 34բ, 36բ, 44ա, 47ա, 48ա, 57ա, 79ա, 93բ, 101ա, 132ա, 138բ, 144ա, 145ա, 146բ, 152ա, 153ա, 156ա, 159բ, 168ա, 183բ, 185բ, 195բ, 200բ, 210ա, 211բ, 216բ, 227բ, 229աբ, 230ա, 231բ), թռչնագիր (14աբ, 16բ, 18ա, 20ա, 24բ, 27ա, 28բ, 29աբ, 30ա, 31ա, 32բ, 34ա, 35բ, 37բ, 38բ, 39բ, 40բ, 41աբ, 42բ, 43բ, 45ա, 46բ, 50բ, 53ա, 54ա, 56ա, 58ա, 65ա, 66աբ, 68բ, 69բ, 71բ, 76ա, 77աբ, 78ա, 79բ, 81աբ, 84աբ, 85ա, 86ա, 87աբ, 89աբ, 90ա, 91ա, 92բ, 94բ, 95ա, 96ա, 98բ, 99բ, 102ա, 105աբ, 106բ, 109ա, 111ա, 112ա, 119ա, 120ա, 121ա, 124բ, 125բ, 126ա, 127բ, 128ա, 132բ, 135ա, 136բ, 140ա, 141ա, 142աբ, 146ա, 149ա, 150ա, 151ա, 155ա, 157բ, 160բ, 162բ, 163ա, 165ա, 166բ, 167ա, 171ա, 172ա, 173ա, 174բ, 178բ, 180ա, 183բ, 186ա, 187ա, 188ա, 189ա, 191աբ, 192բ, 193բ, 194աբ, 197աբ, 198ա, 201աբ, 203ա, 205աբ, 207ա, 209բ, 210բ, 212բ, 214բ, 216ա, 218բ, 223բ, 226ա, 231ա), մարդագիր (19ա, 49բ, 52ա, 60ա, 71բ, 76բ, 97բ, 102բ, 116բ, 119ա, 121բ, 129բ, 169ա, 177բ (Ե՝ Յովսէփ Արիմաթացի), 184ա, 185ա (Ե՝ Մարիամ Աստուածածին), 205բ, 214ա, 222ա), կենդանագիր (22ա, 80ա, 83ա, 88բ, 96բ, 129ա, 154ա, 186բ, 190ա), հանդուցագիր (55բ, 80բ, 81ա, 83բ, 127ա, 199բ, 211բ), յուշկապարկագիր (134ա), բուսական մարդագէմ (183ա):

Գ ո յ ն ե ր՝ կարմիր, կապոյտ, դեղին, կանաչ, նարնջի, վարդագոյն, շագանակագոյն, սեւ, ոսկի (թափուած):

ՎԻՃԱԿ՝ Բաւարար. կազմի կաշին մաշուած, երեք կապիչներն ու երկու դամերը, Բ փեղկի խա՞չն ընկած՝ դամերը մնում են: Խոնաւութիւն տեսած, թուղթը դունափոխուած, եզրերը մաշուած, բամբակացած. թ. 1-9՝ փոքրիկ պատռուածքներ, թ. 154-235՝ ցեցի անցքեր, տեղ-տեղ գրադաշտի փոքր վնասուածքներով: Մէկական թերթ ընկած թ. 69-70ի եւ 79-80ի միջեւ (տե՛ս Բովանդակութիւն):

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. 13ա-73ա Աւետարան Մատթէոսի (թափուած՝ Ե. 7-25 «...Խորհուրդ

արարեալ դնեցին այնու զագ[արակն]/// Արիւն դորա ի վերա մեր...»), 73աբ Նախադրութիւն.

2. 73բ, 113ա Նախադրութիւն, 75ա-112ա Աւետարան Մարկոսի (թափուած՝ Գ. 13-34 «...եւ նա յոյժ սաստէր նոցա, զի մի՛ յայտնի առցեն զնա/// [Հայեցաւ] շուրջ զիւրեւ յաշակերտսն...»), 112ա-113ա Յարութեալ Յիսուս.

3. 113բ-4ա Նախադրութիւն, 114ա-180բ Աւետարան Ղուկասու.

4. 182ա-231բ Աւետարան Յովհաննու:

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Գրչի

11ա (ստ. լս.) Աղցից միջնացն Բ.չաբթին սկսայ զԱւետարանս:

73բ Զստացող սուրբ Աւետարանիս (չչարունակուած):

113ա Ով ընթերցողք սուրբ Աւետարանիս, յիշեցէ՛ք ի մաքրափայլ աղաւթս ձեր (չչաչունակուած):

167բ (ստ. լս.) Թուխթստ, ով եղբայր, աղէկ ու վատ կայր՝ դիր դուս անցուց տեղ-տեղ, վա՜յ ինձ, զի այլ թուխստ չկար, որ փոխէի. անմեղադիր:

171ա (ստ. լս.) Աստուած ողորմի Եղիկին մօր Հոգոյն. եղով լանթակ եբեր, կերա:

231բ Փա՛ռք քեզ, Քրիստո՛ս Աստուած իմ:

232ա Փա՛ռք անբաժանելի եւ միասնական Սուրբ Երրորդութեան եւ մի աստուածութեանն՝ Հաւր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Նայ երետ ինձ միտք ու հոգի, / կարողացոյց այս սուրբ գրի, / ես մեղաւոր եմ ու ձրի / ձեմ արժանի յայսմ գրի: / Առանց վարպետ ես գրեցի, / առանց տեսնուլ յարմարեցի, / Տիրուն եղեւ ինձ հրաման, / որ ի նարմէ ես գուզէի: / Անչափ շնորհքըն նա ունի, / շնորհք եւ բան զարմանալի, / որ կու բաշխէ իւր ծառայիցն, / ում որ իրեն միտքն կամի: / Աստուածատուր ողորմելի / անչափ մեղանք ունիս լալի, / դու միտք դրիր յայսմ գրի / միթէ այսով Աստուած ինձ ողորմի: / Տէր իմ 'ւ Աստուած ամենայնի / դու մի՛ նայիր մեղս իմ ձրի, / այլ զիս յիշեա՛, յորժամ որ գաս / նստիր յաթոռ դատաստանի:

Գրեցաւ Սուրբ Աւետարանս ի թուիս ՌԼԵ. (1586), ի գաւառս Բաբերդու, ի գիւղս |232բ| Մամ, ի դուռն Սուրբն Աստուածածնին եւ այլ սրբոցս, որք աստ կան հաւաքեալ, եւ ի ժամանակս տաճկաց սուլթան Մուրատին. խիստ դառն եւ դիժար ժամանակ է, որ յայսմ ամի հաց սղեց խիստ, որ այլ չէաք տեսել՝ սոմառն Բ. ֆլորի ելաւ, վա՜յ ինձ մեղապարտիս, աղքատքն խիստ դառնութիւն քաշեցին, Աստուած հնաւոր է եւ ինքն ողորմի՝ ողորմածն ամե[նե]ցուն. եւ նմա փառք յաւիտեանս. ամէն: Որ ողորմի Քրիստոս Աստուած ինձ կերակրողիս քրիստոնեա Աղնիկին հոգոյն եւ իւր որդոցն՝ Սիրունին, Խաչերեսին, Վարդիկին, եւ այլ ամենայն ընդանեացն եւ դեղիս համաւրէն ննջեցելոցն հոգոյն, որ մեզ գակնէին (=կոգնէի՞ն) ժամու ժամու:

Ով եղբայրք, յիշեցէք զիս՝ զմեղաւորս զԱստուածատուր երէցս Տանձուտցի, որ գրեցի զՍուրբս Աւետարանս խիստ միտքս ցնդէր |233ա| եւ ցրքէր ի հոգս աշկարհիս: Վայ ինձ, մոլորեալ էի որպէս նաւն ի վերայ ծովուն եւ ալեկոծեալ եւ ոչ գտանէի հանգիստ վասն դառնութեան ժամանակիս: Վայ ինձ, զինչ ասեմ կամ զինչ պատմեմ դառնութիւն ժամանակիս: Խոշորութեան եւ սղալանաց անմեղադիր լերուք, զի կար մեր այսչափ էր: Թուխտ չկար, մանր եւ կուկուռ գրեցի, որ հաւքեցաւ, անմեղադիր լեր եւ յիշեայ:

232ա (ստ. լս.) Մայիսին մուտն աւարտեցաւ Ե. օրն:

Ստացողի

233ա Արդ, մեք՝ Մամայ ժողովուրդս ստացաք զՍուրբ Աւետարանս ի Հալալ վաստակոցս մերոց, եւ տուի ես՝ Սիրունս Բ. սոմառ ցորեն, եւ ես՝ Մարտիրոս Բ. սոմառ, Ղուպաթ՝ սոմառ կես, Յովանէս՝ զսոմառ, Տրան՝ սոմառ կես, Յակոբ՝ սոմառ, Քիստոստուրն՝ կես սոմառ, Ամիր՝ Ե. քիլակ, Ղազար՝ սոմառ կես, Աւագ՝ Բ. սոմառ, Բարզին՝ սոմառ, Աւագ՝ կես սոմառ, Տատուր՝ սոմառ, Էղիկ՝ եւ իւր մաւրն Հէրէքին՝ Բ. սոմառ, Աւետիս՝ սոմառ կես, Ասլի պարոն՝ սոմառ, Մարգարէն՝ Բ. սոմառ, Առաքել՝ Բ. քիլակ, Սարգիս՝ սոմառ կես (երկու տող չգրուած):

|233բ|Գնեցաք եւ եդաք ի դուռս Սուրբ Աստուածածին եւ Սուրբ Սարգսին՝ յիշատակ մեզ եւ մեր ծնաւղացն <մերոց> եւ ամենայն արեան առու մերձաւորացս. ամէն: Արդ մի՛ ոք իշխեսցէ զսուրբ Աւետարանս հանել ի դրանէս Սուրբ Աստուածա<ա>ծնին, ո՛չ մերոց եւ ո՛չ աւտարաց՝ ծախելով կամ գրաւելով կամ գողանալով, եթե յանտքնի ոք հանել զսուրբ Աւետարանս ի դրանէ Սուրբ Աստուածածնիս՝ զմասն Յուդայի առցէ եւ զխաչնհանուացն առցէ եւ զպատիժն Կայենի կրեսցէ, խնամող պահողքն աւրհնին յԱստուծոյ եւ ամենայն սրբոց նորա. ամէն Հայր:

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

234ա (ԺԶ. դ. վջ.) Ես՝ Սիր[ու]նս, շինեցի զեկեղեցի[ս] Սուրբ Աստուածածի[ն]ս եւ Սուրբ Սարգիս ի թվին ՌԻԴ. (1575)՝ յիշատակ ինձ եւ ծնաւղացն իմոցն՝ Ազնիկին եւ մաւրն իմոյ՝ Փաշային, եւ եղբարցն իմոց՝ Խաչերեսին եւ Վարդիկին, եւ կողակցին իմոյ՝ Շամխաթունին, եւ եղբօր կնոջն իմոյ՝ Ճաշիկին, եւ ամենայն արեան առու մերձաւորացն իմոց. ամէ[ն]: Եւ գեղիս համաւրէն ժողովրդոցն, որք աւգնեցին եւ կանկնեցան եւ աշխատեցան, վարձս բարի առցեն ի Քրիստոսէ. ամէն: Հա[յ]ր մեր″:

234ա (ԺԶ. դ. վջ.) (ստ. լս.) Ես՝ Սիրունս, ԻԵ. տարեկան էի, որ զայս եկեղեցիս շինեցի:

234ա (1610 թ.) Ես՝ Սրապիոն վարդապետս, եդի յիշատակ զԱւետարանս ի դուռն Սուրբ Յով[ան]իսու՝ ի քաղաքս Տրապիզոն, իւրեն եւ իւր ծնաւղացն եւ հաւրս՝ Յովանիսին, մաւրս՝ Խէրխաթունին, եւ եղբարցս՝ Խաչերեսին եւ Սարգսին՝

հանգուցելոցն առ Քրիստոս Աստուած, եւ կենդանի եղբօրս իմոյ՝ Գինէոսին, եւ իւր որդոյն՝ Վարդանին, Յովանիսին եւ Մակարին:

Այս Օետարանս յիշատակ էր ի Բաբեր/թու գեւղն Մամայ. գեղն աւերէր էր, եւ սուրբ Օետարանս ի յայլազգեաց ձեռն գերի էր ընկեր. մեք ազատեցաք: Թէ ժամանակ լինի՝ գեւղն շինուի, թէ մեր աւրհնէքն կուզէք, կրկին տաք, որ երթայ իւրեանց յիշատակն, իւրեանց տեղիքն: Թվին ՌԾԹ. (1610):

*181ա (*1667 թ.*)* Յիշատակ է Սուրբ Աւետարանս Աւետիսին եւ իւր կողակցին՝ Նա/նային, եւ իւրեանց հարազատ որդոցն՝ Կիրակոսին, Սուլթանին, Արզմանին, հարսներացն՝ Գոհարին, Եղսիկին, Մարիամին, քուրերացն՝ Մարիամին, Շնորհին, Այլախանին, դարձեալ իւրեանց պապերուն՝ Խոշարին եւ իւր կողակցին՝ Թնորվատին, Ակոբին, Թադաւորշին, դարձեալ իւրեանց որդոցն՝ Մարտիրոսին, Սահակին, եւ իւրեանց համաւրէն ն[ն]ջեցելոցն՝ մեծի եւ փոքու է. ազգին, որ է է. պորտ առ Քրիստոս գնացելոցն: Եղեցի յիշատակ յաւիտե[ա]ն [յաւի]տենից ընդ մարգարէին, որ է զաւակ Սիոնի եւ ընդանեակն յերուսաղէմ. հրեշտակ եւ մարդիք ասասցեն. Եղիցի, եղիցի. ամէն, ամէն: Հայր մեր, որ յերկինս″: Թվին ՌՃԺԶ. (1667):

233բ (ԺԷ. դ.) Աստուած ողորմի Թուրվանդի հոգոյն՝ կես կուռուշ երետ Աւետարանիս:

233բ (ԺԷ. դ.) Յիշատակ է սուրբ Աւետարանս ձեռամբ (անունը ջնջած) վարդապետին, Աստուած ողորմի բարի պատճառաց. ամէն:

234բ (ԺԷ. դ.) Ինչ կայ ի յԱստուածածինս յիշատակ, Աստուած ողորմի Վարդերեսին դստեր հոգուն. շուրջառ մի, շապիք աթլաս դիր Սուրբ Աստուածածին: Աստուած ողորմի Շիհանին հոգուն՝ յիշատակ է քիխմայ շուռջառ մ՝, սաղաւարդ մ՝:

Աստուած ողորմի Լուսիկին հոգոյ Դ.՝ Սիրուն կարեց Դ. կտորն շուռջառ երաւ:

[Աստուած ողորմի] հոգին Տումայ՝ շուռջառ մ՝ դրին յիշատակ. Սհակին մարն Մսրիկն՝ եդիր յիշատակ սկի մ՝ սուրբ սեղանի ծածկոց. Աստուած հոգուն ող″:

Աստուած ողո[ր]մի Պասմաճուն հոգոյն՝ եդիր սուրբ սեղանի ծածկեաց: Աստուած ողո[ր]մի Ղարայգուզին՝ վարագուր, սաղավարդ մ՝. Պողո[ս] իրիցուն թոռն Ասորիկ Մուրատին որդոյն յիշատակ է վարագուր, Շաթըրին Խաչայտուրի՝ դիր յիշատակ կոճկէն գործ վարագուր, Սիմաւոն՝ խալիչա մ՝. Խաչայտուր էրէցն ու մանտաւաքն քշոց մ՝, Պզտիխաթուն՝ բուրվառ մ՝, Ջիանդըայ գալք (չշարունակուած):

12ա (Ի. դար) Հիշատակ Ղումաշ Սանսոսի որդի Մկրտիչ:

ՆՇՈՒՄ՝ 1ա՝ «Սանոսյան, ՍԱ» (կապոյտ թանաքով): 235ա՝ «ՌԾԸ. + 551, գրված է 1609 թ.» (կապոյտ թանաքով):

Պատանումն Քրիստոսի աւետարան 2, էջ 6ա

Քրիստոս Չորեքկերպեան աթոռին եւ առաքեալք աւետարան 2, էջ 9բ



Յովհաննէս աւետարանիչ եւ Պրոխորոն աւետարան 2, էջ 181բ

## 3
## Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

ԳՐԻՉ՝ Մկրտիչ: ԺԶ. դար

ԹԵՐԹ՝ 261. չգրուած՝ 1աբ, 2բ, 127բ, 208ա: ՊՐԱԿ՝ Ա-ԻԳ*x12* (Ա, ԺԴ, ԺԸ 11, Գ, ԻԲ 10, ԻԳ 4): ՆԻՒԹ՝ թուղթ: ՄԵԾԻԹԻՒՆ՝ 18,2*x*13,6*:* ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն (13-13,5*x*9-9,5*)*: ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 205բ): ՏՈՂ՝ 21:

ԿԱԶՄ՝ շագանակագոյն դրոշմազարդ կաշի, Ա փեղկին մետաղէ մէկ փլաք եւ երկու մետաղէ հաւասարաթեւ խաչ. վերինն ամրացուած 5 կոստղ-դամերով, ստորինը՝ երեք կոստղ-դամերով, Բ փեղկին՝ մէկ հաւասարաթեւ խաչ՝ ամրացուած հինգ կոստղ-դամերով, միջուկը՝ տախտակ, աստառը՝ կանաչ մետաքս:

ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ՝ 2 (Ա-Բ) + 2 (Գ-Դ). մասն նոյն ձեռագրի: Ժ. դար, Ա-Բ եւ Գ-Դ՝ ստացուած զոյգ եզրահատուած թերթի ընդլայնակի ծալմամբ, մագաղաթ, բոլորգիծ երկաթագիր (նմուշ՝ Բբ), 27*x*17,2, երկսիւն, 21 տող[3], 1. Աւետարան Մատթէոսի ԻԸ. 8-11, 2. Աւետարան Մարկոսի Գ. 28-31, Դ 7-11, Ե. 24-27, Ե. 37- Զ. 2, Զ. 9-13: Կարդալ Աա[2], Բբ[2], Աբ[1], Բա[1], Աա[1], Բբ[1], Գա[2], Դբ[2], Գբ[2], Դա[2], Գբ[1], Դա[1], Գա[1], Դբ[1]: ԱԲ. «[աշակերտ]ացն: Եւ ահա՝ [պատահեաց նո]ցա Յիսուս՝ եւ... [երթից]են [ի Գալիլեա՝ եւ անդ] տե[սցեն զիս]: Իբր[եւ նոքա գնացին], ահ[ա]/// եւ հայ[հոյութիւնք՝] որչափ եւ հա[յհոյես]ցեն... Գան եղբարքն [եւ մա]յր նորա, եւ ա[ռտաք]ոյ կացեալ՝ [յղեցին եւ կո]չէին/// [փ]ուշքն [եւ հեղձ]ուցին զնա, եւ [պտուղ] ոչ ետ... աշակե[ռտաւքն] հանդերձ՝ զա[ռակսն] Եւ ասէ ցնո[սա]»: ԳԴ. «Եկ գնաց ընդ [նմա]... զայրացեալ: Իբրեւ լուաւ/// [զՅովհա]ննէս՝ զեղ[բայրն Յ]ակովբայ... [լսէ]ին՝ զարմանա[յին ընդ] վարդապետ[ութիւն նորա]/// [աս]է՝ երկուս պար[եգաւ]տս... [աւ] ծանէին [իւղով զբա]զում հիւանդս, եւ բժշկ]էին զնոսա»:

Մանրանկարչութիւն՝ Բա՝ զարդագիր (պահպանուած միայն մի փոքր հատուած): Գոյները՝ կարմիր, կանաչ, սեւ:

---

3 Ծնթ. ձեռագիրը համամասնութեան կանոնով հաւանաբար ունեցել է 34x27 չափս. պահպանուած համամասնութիւններն են. ներքին եւ վերին լուսանց՝2,5սմ, մէկ սիւնակը՝9,5x26,5սմ, որի համաձայն 5 սմ ենք հաշուել սպորին լուսանցը, 3,5 սմ՝արտաքին լուսանցը եւ 2 սմ՝սիւնակամէջը: Արդիւնքում ստացուել է 34 սմ երկարութիւն. 2,5 (վերին լուսանցը) + 26,5 (սեան երկարութիւնը) + 5 (սպորին լուսանցը) եւ 27սմ լայնութիւն (2,5 (ներքին լուսանցը) + 9,5 (առաջին սիւնակը) + 2 (սիւնակամէջը) + 9,5 (երկրորդ սիւնակը) + 3,5 արտաքին լուսանցը:

ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ՝ Կիսախորան՝ 2ա, 3ա, 78ա, 128ա, 209ա:

Լուսանցազարդ՝ բուսական (5ա, 7աբ, 8ա, 9աբ, 11ա, 14բ, 18ա, 20բ, 21աբ, 23ա, 26բ, 27ա, 28բ, 29բ, 30բ, 32բ, 33բ, 34բ, 35ա, 36աբ, 37բ, 40բ, 43ա, 46բ, 47բ, 50աբ, 52բ, 53բ, 55բ, 57բ, 60ա, 66բ, 67ա, 68ա, 70ա, 71բ, 75բ, 79աբ, 80բ, 81բ, 82աբ, 84աբ, 85բ, 86ա, 88ա, 89բ, 90բ, 91բ, 92աբ, 93բ, 94բ, 95բ, 97ա, 98աբ, 99ա, 100ա, 102բ, 103բ, 105աբ, 106բ, 108ա, 109բ, 110բ, 114բ, 117ա, 118ա, 119ա, 126ա, 130աբ, 133աբ, 134բ, 135բ, 136բ, 142ա, 143աբ, 144բ, 145ա, 146բ, 149աբ, 151բ, 153բ, 155բ, 157ա, 158բ, 159բ, 160ա, 162ա, 163ա, 164ա, 165բ, 168ա, 169բ, 172ա, 173ա, 174ա, 179ա, 181բ, 184ա, 185ա, 186ա, 188բ, 190բ, 191բ, 192ա, 193աբ, 196ա, 200ա, 205ա, 206բ, 207ա, 210աբ, 211աբ, 212բ, 213ա, 214ա, 215աբ, 216բ, 218ա, 219ա, 221ա, 222ա, 223ա, 224աբ, 225բ, 228աբ, 229բ, 230ա, 232աբ, 233ա, 235ա, 237բ, 238ա, 241աբ, 242բ, 243ա, 244բ, 245բ, 246բ, 247բ, 253բ, 257բ, 260բ), Թռչուն (25ա, 39ա, 54բ, 83ա, 85բ, 112բ, 113բ, 122բ, 125ա, 140ա, 141ա, 171ա, 176ա, 183ա, 190ա, 204ա, 236բ, 239ա, 243բ, 244ա, 248ա, 259ա), Յուշկապարիկ (10ա), վարդեակ (4բ, 20ա, 38բ, 43բ, 45ա, 87ա, 107ա, 220ա, 255բ, 261ա): Զարդագիր՝ բուսական (5ա, 9աբ, 11ա, 13բ, 18ա, 20բ, 21բ, 23ա, 25ա, 26բ, 27ա, 28բ, 29բ, 30բ, 32բ, 33բ, 34բ, 35ա, 36բ, 37բ, 38բ, 40բ, 43ա, 47բ, 50ա, 52բ, 53բ, 54բ, 55բ, 57բ, 60ա, 66բ, 67ա, 68ա, 70ա, 71բ, 75բ, 79աբ, 81բ, 83աբ, 84բ, 85բ, 87ա, 88ա, 89բ, 90բ, 92աբ, 93բ, 94բ, 97ա, 98բ, 100ա, 102բ, 103բ, 105բ, 107ա, 109բ, 110բ, 112բ, 114բ, 118ա, 122բ, 125ա, 126ա, 130աբ, 133բ, 134բ, 135բ, 136բ, 140ա, 143բ, 145ա, 149աբ, 151բ, 155բ, 158բ, 159բ, 162ա, 164ա, 168ա, 169բ, 173ա, 174ա, 179ա, 181բ, 184ա, 185ա, 188բ, 190ա, 191բ, 192ա, 193աբ, 196ա, 200ա, 204ա, 207ա, 211աբ, 212բ, 213ա, 214ա, 215բ, 220ա, 222ա, 223ա, 224աբ, 225բ, 228բ, 232աբ, 235ա, 238ա, 239ա, 241աբ, 243աբ, 244աբ, 245բ, 253բ, 255բ, 257բ, 259ա, 260բ, 261ա), Թռչնագիր (4բ, 10ա, 20ա, 21ա, 36ա, 39ա, 43բ, 46բ, 50բ, 75բ, 80բ, 82ա, 84ա, 86ա, 87ա, 91բ, 95բ, 98ա, 99ա, 105ա, 108ա, 113բ, 117ա, 119ա, 133ա, 134բ, 141ա, 142ա, 143ա, 144բ, 146ա, 153բ, 157ա, 160ա, 163ա, 171ա, 172ա, 176ա, 183ա,

186բ, 205ա, 206բ, 210բ, 215ա, 216բ, 218ա, 219ա, 228ա, 229բ, 230ա, 233ա, 236բ, 237բ, 242ա, 246բ, 247բ, 261ա), բուսական մարդադէմ (45ա, 210ա, 248ա), հանդուցադիր (106բ, 165բ, 190բ, 221ա):

Գ ո յ ն ե ր՝ մուգ կարմիր, սեւ:

ՎԻՃԱԿ՝ Բաւարար, վերջից պակասաւոր (տե՛ս Բովանդակութիւն): Կազմի կաշին մաշուած, մէջքի կաշուի մէջտեղի մասը երկայնքով ընկած, Բ փեղկի միջուկի ստորին հատուածն ընկած, աստառները մաշուած, մասամբ թափուած, երկու կապիչներն ու մէկ դամը, մի կոստղն ընկած: Խոնաւութիւնից դունափոխուած, եզրերը մաշուած. թ. 2-3՝ պատռուածքներ, թ. 3ա-ի կիսախորանը դրեթէ ամբողջութեամբ եւ գրադաշտը մասամբ ընկած: Մէկ թերթ ընկած թ. 153-154ի միջեւ: Պատառիկ Ա-Բի ստորին մասն ընկած, Աբ- Բաի ստորին հատուածը լուսացուած: Թ. 164՝ հիմքից պոկուած:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. 2ա, 3ա-77ա Աւետարան Մատթէոսի.

2. 78ա-127ա Աւետարան Մարկոսի.

3. 128ա-207բ Աւետարան Ղուկասու (թափուած՝ Ը 18-29. «...Տեսէք այսու[հետեւ]/// Եհարց ցնա Յիսուս եւ ասէ...»).

4. 209ա-261բ Աւետարան Յովհաննու (թափուած ԻԱ 9-25 «...քարշէին զգործին հանդերձ ձկամբն: Իբրեւ ելին ի ցա[մաք]///):

Ծնթ. Յովհաննու Աւետարանի վերջից ընկած երկու թերթ եւ Յիշատակարանի՝ անորոշ քանակի թերթ:

Լուսանցային համաբարբառ՝ 2-6 տող:

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Գրչի

8ա (ստ. լս.) Եւ պահեայ ցանկ այս ներ/// ես///:

77ա Զսակավ աշխատողս զՄկրտիչ յիշեցէ՛ք ի Քրիստոս, եւ դուք յիշեալ լիցիք առ Տէր. ամէն:

127ա Քահանա՛յք սուրբ եկեղեցւոյ, որք հանդիպիք այսմ Աւետարանիս, յիշեցէ՛ք ի Քրիստոս զվարպետն իմ՝ զտէր Յովհաննէս եւ որ մականուն կոչի Ոսկիափոր, ընդ նմին եւ զեղկելի եւ զանարժան գրչակիս՝ զՄկրտիչ, եւ զծնողսն իմ, եւ դուք յիշեալ լիցիք առ Քրիստոս. ամէն:

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

77բ (1970-ի շուրջ, շղագիր) Վ.օրտիներ չը մոռանաք լեզուն ե[ւ] հաւատ

ասօ, դա և միակ փրքութիւն մարտու: Գրքերը տրված և յերազով: Հիշատակ Ղումաշ Սանօսիանի. Մկրտիչ:

208բ (1970-ի շուրջ, շղագիր) Գրքերը մեր տանը գտնվում և Ղումաշի անվան յերազով և տրված, Մկրտիչ Մկրտչյան (Սանոսիան):

ՆՇՈՒՄ՝ 1ա՝ Սանոսյան (կապոյտ գրիչով): 78ա՝ Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի, որ ըստ Մարկոսի (մանուշակագոյն թանաքով, 1950-ական թթ.): 128ա՝ Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի, որ ըստ Ղուկասու (մանուշակագոյն թանաքով, 1950-ական թթ.): 209ա՝ Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի, որ ըստ Յօհաննու (մանուշակագոյն թանաքով, 1950-ական թթ.):

Կիսախորան-անուանաթերթ աւետարան 3, էջ 2ա



Ցուշկապարիկ եւ թուշնագիր աւետարան 3, էջ 10ա



Հետագայի յիշատակարան (1970-ի շուրջ, շղագիր) աւետարան 3, էջ 77բ

## 4
## ՀՄԱՅԻԼ

Ստանբոլ ՌՃԿԳ. - 1714

ԳՐԻՉ՝ Թուման:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻՒԹ՝ թուղթ՝ լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 259Բ7,3-7,5 (բաղկացած է իրարից անջատ 10 կտորից. 16,2+8,1+40,6+81+5+7+7,5+42,2+21,2 +30,2): ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (6սմ): ԳԻՐ՝ նոտրգիր:

ՎԻՃԱԿԸ՝ բաւարար: Սկզբից, մէջտեղից թերի, եզրերը տեղ-տեղ մաշուած, քայքայուած, դրադաշտը տեղ-տեղ թափուած, անարուեստ սկզբունքով նորոգուած ԻԱ. դարում:



### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ

Ա. [Աղօթք] - ///կապեաց Քրիստոս զշուն Արապին, որ եւ երկաթ դարձաւ այն... այնպէս զարհուրի զահընդի ՀԲ. /// դն///

Բ. [Աղօթք առ սուրբս] (Հայատառ թուրքերէն) - ///մսմիլ ըռահման ըռահիմ...յուԹաս եւ դու/// սլամ իսաե ապեհ...եւ ոչ կարեն չար առնել ծառայիս Աստուծոյ (անուան տեղը բաց, չլրացուած) ամէն, Աստուծով է:

Գ. Գիր պահպանութեան եւ չար որաւորի, չար բռնաւորի եւ ՀԲ. ազգի լեզուակապ, զայս գրէ, որ մառեխն չարաւն լինի եւ զոհալն բարեկամ եւ շէմէրն իսնպուլն եւ շէմշն ի համալն գրէ, որ կատարի, աստուծով է - Համայանշաններ: Սարւար դալպատի: Համայանշաններ: Փուլ փարա փուլ... երդումն տամ քեզ վկայութեամբ գրէս այսորիկ, զայս գ///

Դ. [Աղօթք] - ///բարկեմ /// երեսիդ քաւուր վարդ եմ, ի քթեդ ըռեհան եմ... թվանքն բանբակ, նետն բուրթ եւ ոչ մերձենա ի ծառայիս Աստուծոյ (անուան տեղը բաց, չլրացուած) ամէն... զի դու, տէր, օգնեցիր ինձ եւ մխիթարեցեր զծառայս քո (անուան տեղը բաց, չլրացուած) ամէն... եւ ոչ կարեն չար առնել ծառայիս Աստուծոյ (անուան տեղը բաց, չլրացուած) ամէն Աստուծով:

Ե. Գիր չար լեզ[ա]կապի եւ պահպանութեան զայս գրէ, որ զոհալն ի շարաւն լինի եւ օտարիդն բարեկամ գրէ, որ կապի ՀԲ. ազգի լեզու - Սուրբն Սարա եւ սուրբն Սարա Սիա... եւ որ կարեն չար առնել ծառայիս Աստուծոյ

(անուան տեղը բաց, չլրացուած) ամէն... եւ խաղաղութեամբ ի տուն դարձուցէք զծառայս Աստուծոյ (անուան տեղը բաց, չլրացուած) ամէն: Տէր Աստուած Յիսուս Քրիստոս գիրս ես՝ մեղաւոր Թումէս գրեմ, ամենայն սուրբ բարեխօսութեամբ կատարի ամէն Աստուծով: Էնիկ բենիկ մենիկ այիայ աշրա իայ... ՀԲ. ազգի լեզուն, որ չորանան եւ ոչ մերձենան ի ծառայիս Աստուծոյ (անուան տեղը բաց, չլրացուած) ամէն:

Զ. Գիր պահպանութեան եւ լեզուայկապ: Զայս գրէ, որ մուշտարին ի շարաւն լինի եւ օտարիտն բարեկամ եւ շամարն ի տաւլն եւ չէմշն բալն գրէ կատարի Աստուծով - Հմայանշաններ, Սարմ սարկ տալա կուրմա սաւս զամէ զարմադ սմա զպան պաստեմ յամիմին քաս –Հմայանշաններ:

Է. [Մաղթանք սուրբ Աստուածածնին եւ ամենայն սրբոց, ՄՄ. ձեռ. հմայիլ 501, Բ] - Բարեխօսութեամբ սրբոյհոյ Աստուածածնին եւ Յովաննոյ Մկրտչին... եւ ամենայն սրբոց երկնաւորացն եւ երկր<ր>աւորացն Տէր Յիսուս Քրիստոս փրկեա զծառայս քո (անուան տեղը բաց, չլրացուած) ի յամենայն չար որոգայթէ ի ՀԲ. ազգէ յերեւելի եւ յանե<ե>րեւութ թշնամոյն, յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգոյն Սրբոյ. ամէն:

Ը. Զայս տլսմն գրէ, որ մառեխն ի ախրապն լինի եւ ղէմէրն ի ճէտին եւ չէմշն ի տաւլն, գրէ, որ մուրազդ կատարի Աստուծով – Հմայանշաններ, Այամեն շիրին վշովին աղանտայ ամեն խար մշովին աչաշ յամեն քո ւուր մշովին աքաս նա չէ յատի քուր դան փշի ալահ ա թալահ ապարի խուտա նիդար տար պաշի. ամէն:

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐՉԻ

(1714 թ.) Արդ, գրեցաւ սա ի քաղաքն Ստանբոլ՝ թվին ՌՃԿԳ. (1714), մարտ ԺԶ. եւ Հայոց ամիս Արաց ԻԴ., եւ յունաց ամիս Դէւօսիրօս ԺԶ., եւ Փոքր Հայոց Սար[կ]աւաքի ամիս Արեգի Ը., եւ ասօրոց ամիս Ադար ԺԶ., եւ Շամշի ամիս Նիրհան Լ., եւ տաճ[կ]աց ամիս Ըրապի ալ աւալ ԺԷ. եւ եբրաեցոց ամիս Ադար Լ. եւ արաբացոց կապադովկացոց ամիս Շմար Զ., եւ վրաց, աղւանից, պարսից ամիս Հատալա Ա., եւ եգիպտացոց ատելացոց շամարտացոց ամիս Քթէթ Դ., եւ արեգակն ԺԸՌ. աստիճ բանցրացեր էր եւ արեգակն Հութ ԲՌՃԼ. աստիճան էր, եւ արեգակն մառէխ գօտու Ժ. թվին էր, եւ ԿՌ. թանկա էր, եւ արեգակն ՂԹՃՌ. ՂԹՃՂԹ. մուշտարինէ էր, եւ արեգակն երկնամիջակ կիտին էր, եւ Լուսին ԻԳ. աւուր Զ. ժամու էր, եւ Լուսին Ղէովս բռջի ԺԱ. աստիճան էր, եւ Լուսին Շամար գօտու Ա. թվին էր, եւ արեգակն Ղատ գրին էր, եւ տիւն ԺԱ. ժամ ԻԶ. մաս էր, եւ գիշերն ԺԲ. ժամ Դ. մաս, եւ պատկեր օրն Դ.շաբթի, եւ աւուր շարաւն շանթակողն, եւ շարաւ ժամուն Զօհրէն, եւ գլուխ վիշապին յարեւելքն, եւ տուտ վիշապին հիւսիս, եւ դիւահար աստղն հարաւ, եւ այսօր արեգակն ՅԿ. հոլով ընդանար. եւ Ա. հոլովն ԵՃ. ասպարէզ է, եւ Ա. ասպարէզն ԵՌ. մղոն է, եւ Ա. օրն ԻԴ. ժամ է, եւ Ա. ժամն Լ. մաս է, եւ ժամն ՇԹՃՌ. ՇԹՃ[Ղ]Թ մանր մաս է, այս բաւ է իմաստնոց:



Հմայանշաններ եւ աղօթք



Գրչի յիշատակարանից հատուած

**ԴԱՒԻԹ ՂԱՋԱՐԵԱՆ**